

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2024-1-5-Ա

ք. Երևան

08.02.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի փետրվարի 8-ի նիստում քննարկեց 2023 թվականի դեկտեմբերի 12-ին արտոնագրային հավատարմատար Վանիկ Մարգարյանի կողմից ներկայացված Նորայր Ասատրյանի (ք. Երևան, Դավիթաշեն, Տիգրան Պետրոսյան, թաղ. 4, շ. 76, բն. 17, AM) «COCO KOREAN BEAUTY» (№20230293) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ հայտը ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված ֆիզիկական անձի կողմից, սակայն հայտարկված նիշում առկա «Korean Beauty» գրառումը կարող են սպառողներին մոլորության մեջ գցել ապրանքների և ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի կամ բնույթի վերաբերյալ հարցում և տպավորություն ստեղծել, որ ապրանքները կորեական ծագման են: Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ

շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների և ծառայությունների համար Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցման հիման վրա պահպանվող «COCO» («CHANEL SARL», Quai du General-Guisan 24, 1204 Geneve, Switzerland (CH), N-1196, 12.05.1997թ.) և միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող՝ «COCO», «COCO CHANEL», «COCO MADEMOISELLE», «COCO NOIR» («CHANEL SARL», Quai du General-Guisan 24, 1204 Geneve, Switzerland (CH), IR-363419A, 13.11.1969թ., IR-479675A, 15.09.1983թ., IR-1108062, 13.01.2012թ., IR-1698582, 11.10.2022թ.) բառային ապրանքային նշաններին: Կարգի 119.1-րդ և 122.10-րդ կետերի համաձայն բառային ապրանքային նշաններին նման կարող են համարվել բառային ապրանքային նշանները, որոնց նմանությունը որոշվել է նշաններից մեկը մյուսի մեջ մտնելու հանգամանքով: Տվյալ դեպքում հայտարկված «COCO Korean Beauty» նիշի «COCO» բառային տարրը, որը կազմում է նշանի հիմնական՝ առաջնային ընկալման տարրը, ամբողջությամբ ներառված է ավելի վաղ գրանցված՝ «COCO», «COCO CHANEL», «COCO MADEMOISELLE» և «COCO NOIR» ապրանքային նշանների մեջ: Ինչպես նաև հայտարկված նիշի գրանցումը կարող է մերժվել նույնիսկ այն դեպքում, երբ ապրանքները և ծառայությունները, որոնք նշված են այդ նշանով, նույնատիպ չեն, եթե դա սպառողին մոլորության մեջ է գցում և պատճառ դառնում այդ ապրանքների (կամ ծառայությունների) և ավելի վաղ գրանցված ապրանքային նշանի իրավատիրոջ միջև կապ ենթադրելու՝ հաշվի առնելով, որ դա կարող է վնաս հասցնել վերջինիս շահերին: Տվյալ դեպքում ավելի վաղ գրանցված ապրանքային նշանների ԱԾՄԴ-ի 03-րդ և 35-րդ դասերում ներառված ապրանքներն ու ծառայություններն ամբողջությամբ զուգորդվում են հայտարկված նիշի՝ 03-րդ, 35-րդ և 44-րդ դասերում ներառված ապրանքների ու ծառայությունների հետ և ունեն սպառողների նույն շրջանակը, քանի որ, մի դեպքում խոսքը վերաբերում է կոսմետիկական՝ մարդկանց գեղեցկությունն ապահովող և երաշխավորող ապրանքներին, իսկ մյուս դեպքում՝ դրանց վաճառքին և կիրառմանը, այդ թվում՝ գեղեցկության սրահներում, ուստի, սպառողը կարող է կապ ենթադրել՝ կարծելով, որ հայտարկված նիշը պատկանում է նույն՝ «COCO», «COCO CHANEL», «COCO MADEMOISELLE» և «COCO NOIR» ապրանքային նշանների իրավատիրոջը՝ «CHANEL SARL» ընկերությանը և դա կարող է վնաս հասցնել վերջինիս շահերին: Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017 – Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 111- րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի

Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում և ՀՀ տարածքից դուրս օգտագործվող՝ «COCO», «COCO CHANEL», «COCO MADEMOISELLE» և «COCO NOIR ապրանքային նշանների նկատմամբ, որի մասին տեղեկությունն առկա է <https://www.chanel.com/fr/parfums/femmes/c/7x1x1x31/coco-mademoiselle/>, <https://tbuy.am/product/28212/>, <https://www.facebook.com/IcebergPerfume/posts/1588604778012012/>, <https://aliexpress.ru/wholesale?SearchText=COCO+CHANEL&g=y&page=1>, https://www.amazon.com/s?k=%C2%ABCOCO%C2%BB%2C+%C2%ABCOCO+CHANEL%C2%BB%2C+%C2%ABCOCO+MADEMOISELLE%C2%BB%2C+%C2%ABCOCO+NOIR%C2%BB&crid=3RSBETI7RSO0M&sprefix=coco+%2C+coco+chanel+%2C+coco+mademoiselle+%2C+coco+noir+%2Caps%2C186&ref=nb_sb_noss_2, https://www.alibaba.com/trade/search?spm=a2700.galleryofferlist.fy23_pc_search_bar_associationItem.0&tab=all&searchText=coco+chanel+perfume ինտերնետային կայքերում և որոնց մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու, կրկնական փորձաքննության որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ հայտը ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված ֆիզիկական անձի կողմից, սակայն

հայտարկված նիշում առկա «Korean Beauty» գրառումը կարող են սպառողներին մոլորության մեջ գցել ապրանքների և ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի կամ բնույթի վերաբերյալ հարցում և տպավորություն ստեղծել, որ ապրանքները կորեական ծագման են: Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների և ծառայությունների համար Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցման հիման վրա պահպանվող «COCO» («CHANEL SARL», Quai du General-Guisan 24, 1204 Geneve, Switzerland (CH), N-1196, 12.05.1997թ.) և միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող՝ «COCO», «COCO CHANEL», «COCO MADEMOISELLE», «COCO NOIR» («CHANEL SARL», Quai du General-Guisan 24, 1204 Geneve, Switzerland (CH), IR-363419A, 13.11.1969թ., IR-479675A, 15.09.1983թ., IR-1108062, 13.01.2012թ., IR-1698582, 11.10.2022թ.) բառային ապրանքային նշաններին: Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017 – Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 111-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում և ՀՀ տարածքից դուրս օգտագործվող՝ «COCO», «COCO CHANEL», «COCO MADEMOISELLE» և «COCO NOIR» ապրանքային նշանների նկատմամբ:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Վանիկ Մարգարյանի կողմից ներկայացված Նորայր Ասատրյանի «COCO KOREAN BEAUTY» (No20230293) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել, փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ**

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ